32 Մարել են հույսդ ու սերդ,

1. Մարել են հույսդ ու սերդ,
Քնարդ լռել է տխուր,
Տրտում են հիմա երգերդ,
Ո՞հ, եղբա՛յր իմ, ընկե՛ր իմ, ո՞ւր ես դու։

2. Լքել ես դու մթնում լույսը,
Խավարը մանգաղ է մի սուր,
Կտրել է հավատքդ ու հույսդ,
Ո՞հ, եղբա՛յր իմ, ընկե՛ր իմ, ո՞ւր ես դու։

3. Աստղերն՝ աղոթում անշշուկ,
Ծաղկունքն աղոթք են շշնջում,
Լոկ դու մնացիր անաղոթք,
Ո՞հ, եղբա՛յր իմ, ընկե՛ր իմ, ո՞ւր ես դու։

4. Ողբում է երկինքը համակ,
Սուրբերն՝ աղոթում քեզ համար,
Արցունք կա աչքին Հիսուսի,
Ո՞հ, եղբա՛յր իմ, ընկե՛ր իմ, ո՞ւր ես դու։

5. Մարել են հույսդ ու սերդ,
Քնարդ լռել է տխուր,
Տրտում են հիմա երգերդ,
Ո՞հ, եղբա՛յր իմ, ընկե՛ր իմ, դարձի՛ր տուն։